

ՄՈՒՍԱՅԻ ՎԵՐԱԳԱՐՁԸ ՊԱՅՄԱՆԱԴՐՈՒՄԸ ԵՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Future News-Էն առջի օր ուշ երեկոյան խօսելով, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա ըսաւ, թէ Պեյրուզ վերադառնալու իր որոշումը պայմանաւորուած է արաբական նախաձեռնութիւնը գործարդելու լիբանանեան կողմէրու պատրաստակամութեամբ:

Մուսա դիտել տուաւ, որ նախաձեռնութեան առաջին քայլը հանրապետութեան նախագահի ընտրութիւնն է ապա՝ կառավարութեան մը կազմութեան շուրջ սկզբունքներու ճշդումը եւ ոչ՝ պաշտօններու բաշխումը: Մուսա ըսաւ, որ արտաքին որեւէ պետութիւն իրաւատրոյն չունի նախարարական պաշտօններուն սակարկութեան մէջ մտնելու: «Լիբանան կ'այցելւի երբ շօշափեմ, որ տուեալները օգտակար են: Անիմաստ տեղ չեմ այցելէր», ըսաւ Մուսա:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարը ըսաւ, թէ այնքան ալ նպատակայարմար չէ այս հանգրուանին բացայայտել նախաձեռնութիւնը խանգարողներուն ինքնութիւնը: «Կարող եմ այն է, որ տակաւին միջոցներ կան ճամբան շարունակելու եւ նախաձեռնութիւնը յաջողութեան հասցնելու», ըսաւ Մուսա:

Մուսա դիտել տուաւ, որ «ոչ յաղթող, ոչ պարտուող»-ի այժմու կացութիւնը լաւագոյն ընտրանքն է իր առաքելութեան յաջողութեան: Մուսա գգուեցուց, որ սպառողական վիճակը ձեռնտու չէ՝ ոչ ոքի: Մուսա ցաւ յայտնեց, որ երբ խորհրդարանական մեծամասնութիւնը հազիւ ընդունեց «երեք տաս»-երու տարբերակը, անմիջապէս յաջողեցին նոր պայմաններ:

Ամր Մուսա մերժեց մեկնաբանել արաբական նախաձեռնութեան մասին Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլէի տուած բացատրութիւնը:

Մուսա ըսաւ, որ արաբ արտաքին գործոց նախարարներու արտակարգ կիստ մը գումարելու պահանջը կրնայ ներկայացուիլ Լիբանանի եւ կամ՝ Սուրիոյ կողմէ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԻՐԸ

Ֆրանսա վերստին շեշտեց Լիբանանի մէջ նախագահ մը ընտրելու անհրաժեշտութիւնը: Արտաքին գործոց նախարարութեան խօսակա Փասքալ Անտրէանի ըսաւ, թէ Դամասկոսի գերատիժանը երբ իր գորակցութիւնը արտայայտեց արաբական նախաձեռնութեան, այժմ հասած է անոր գործադրութիւնը տեսնելու պահը:

Անտրէանի նշեց, թէ Սուրիա պէտք է գիտակցի, որ անհրաժեշտ է Լիբանանը դուրս բերել իր ներկայի տագնապէն:

Անտրէանի նաեւ ըսաւ, որ միջազգային դատական ատենանք կտրած է բաւական յստակ ճամբայ: «Ատենանք զուտ իրաւական բնոյթ պիտի ունենայ, հեռու վրէժխնդրութիւններէ եւ քաղաքական սակարկութիւններէ, որովհետեւ բոլորս ճշմարտութեան բացայայտումը կը պահանջենք», ըսաւ Անտրէանի:

ՎԱՐՉԱՊԵՏ ՄԻՆԻՈՐԱԿ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԵՐ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԶԱՅԵՐԸ

Վարչապետ Ֆուատ Սիւնիորա դատապարտեց Արեւելեան Երուսաղէմի եւ Արեւմտեան Ափին մէջ բնակեցման նոր վայրեր կառուցելու Իսրայէլի քայլը: Վարչապետ Սիւնիորա ընդգծեց, որ իր տոյն քայլով Իսրայէլ կ'ապացուցէ, թէ իր խորքէն ու ոճը, ինչպէս նաեւ նպատակը կը պահէ անփոփոխ՝ վերջ դնելու բռնարարութեայ կողմէրու վրայ արաբական եւ պաղեստինեան ինքնութեան:

Վարչապետ Սիւնիորա դիտել տուաւ, որ Իսրայէլ մէկ կողմէ կը բռնագրաւէ,

իսկ միւս կողմէ իր կեղծ քարոզչութեամբ խաղաղութեան բանակցութիւններ վարելու տալուորութիւն կը ստեղծէ: Սիւնիորա դատապարտեց իսրայէլեան ոսնձգութիւնները եւ իսկական օժանդակութիւն պահանջեց պաղեստինցի քաղաքացիին եւ պաղեստինեան իշխանութիւններուն՝ իսրայէլեան դաւադրութիւններուն դէմ:

Վարչապետ Ֆուատ Սիւնիորա ընդունեց Լիբանանի մօտ Ֆրանսայի հաւատարմատար Անտրէ Փարսանը: Հանդիպումէն ետք Փարսան ըսաւ, թէ արաբական նախաձեռնութիւնը կը ներկայանայ լիբանանեան տագնապին միակ եւ գլխաւոր լուծումը: «Ոչ մէկ ուրիշ նախաձեռնութիւն, քան՝ արաբականը», ըսաւ Փարսան: Հաւատարմատարը նաեւ դիտել տուաւ, որ ճիշդ չէ, որ լիբանանցիները ամէն բան դուրսէն սպասեն: Փարսան աւելցուց, թէ լիբանանցիները եւս իրենց կարգին ունին ընելիք:

Սիւնիորա, նաեւ ընդունեց Լիբանանի մօտ Յորդանանի դեսպանը:

ԱՊՈՒ ՖԱՍՈՒՐ ԿԸ ԶԳՈՒՅԱՆԵ ԸՆԿՐՈՒՄԻ ԵՒ ՈՃԻՐՆԵՐՈՒ ՏՐԱՍՓԱՆՈՒԹԵԱՆ

«Դեմոկրատական հանդիպում» խորհրդարանական խմբակուրումի անդամ, երեսփոխան՝ Ուալի Ապու Ֆաաուր ճիշդ եւ խոհեմ քայլ նկատեց Լիբանանի բացակայութիւնը արաբական գերատիժանէն: Ան ըսաւ, թէ արաբները աննախադէպօրէն պաշտպանեցին Լիբանանի անկախութիւնը եւ գերիշխանութիւնը:

Ապու Ֆաաուր իր հաւանութիւնը տուաւ Սուրիոյ դէմ Սեուտական Արաբիոյ կողմէ ներկայացուած պատժամիջոցներու առաջարկին, եթէ Դամասկոս շարունակէ Լիբանանը քայքայելու իր քայլերը:

Երեսփոխանը, մեկնելով սուրիական վարչակարգին հետ իր փորձառութենէն, իր մտահոգութիւնը արտայայտեց, որ յետ գերատիժանի հանգրուանին Լիբանանի մէջ գարգաւայ մագլցումի եւ ոճիրներու տրամաբանութիւնը:

Ապու Ֆաաուր իր մտահոգութիւնը արտայայտեց Սուրիոյ կողմէ պաղեստինեան խաղաքարտը օգտագործելու եւ կամ ահաբեկչական գործողութիւններէն: Ան ըսաւ, թէ սուրիական վարչակարգը երկու ճակատագրական սպառնալիքներու դէմ յանդիման կը գտնուի այսօր՝ միջազգային դատական ատենանք եւ արաբական աշխարհի դիրքորոշումը:

ՍԵԼԵՍԵ. «ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՐԸ 1,5 ՄԻԼԻԱՐԸ ՏՈՒՆՈՒՄԻ ԱՆԵՂՈՒՅԱԾ Ե ՈՒՆԵՐՈՒՄԸՆԵՐԸ»

Լիբանանի Կեդրոնական Դրամատան ընդհանրուր կառավարիչ Ռիատ Սելեմը ըսաւ, թէ Ելեմմատական մարզը 2008-ին արձանագրեց զգալի զարգացումներ:

Մամլոյ ատուկիսի մը ընթացքին խօսելով, Սելեմը յայտնեց, թէ շնորհիւ Կեդրոնական Դրամատան վարած քաղաքականութեան, 2008 տարեշրջանի առաջին եռամսեակին հետադարձ եղած է Կեդրոնական Դրամատան ունեցուածքներուն մէջ արձանագրել 1,5 միլիարդ տոլարի յաւելում մը:

ԻՍԿ ԳԸՉՊԱՆԿԱՆ ԿԸ ԶԻՆՈՒՒ...

Իսրայէլեան ծայնասփիւռը վկայակոչելով բանակի սպայի մը հաւատումները հաղորդեց, թէ Յրզպալլա միւս կողմէ կը շարունակէ գեղջ ստանալ Իրանէն ու Սուրիայէն: Չայնասփիւռը աւելցուց, թէ բանակի ընդհանուր հրամանատար, զօրավար Կեպի Աշքիհազի իր կարգին տեղեկագիր մը պիտի ներկայացնէ այս մասին, արտաքին գործոց նախարարութեան:

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՅՍՕՐ ԿԸ ԺԱՄԱՆԷ ՊՈՒՔՐԵԸ

Հայաստանի վարչապետ, նորընտիր նախագահ՝ Մերժ Սարգսեան, այսօր՝ Ապրիլ 3-ին պիտի մեկնի Պուրթէշ, մասնակցելու ՆԱՏՕ-ի գերատիժանին:

Սարգսեանի գլխաւորած պատուիրակութեան մաս կը կազմէ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան: Պուրթէշի մէջ, Մերժ Սարգսեան հանդիպումներ պիտի ունենայ ԵԱՀԿ-ի Սինքսի խումբի համանախագահներուն հետ: Սկզբունքով, Հայաստանի պատուիրակութիւնը նոյն օրը պիտի վերադառնայ Երեւան:

ԲՈՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՄՕՏ ԵԱՀԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՆ ԴԷՄ

Երեւանի մէջ, ոստիկանութիւնը առանց որեւէ բացատրութիւն տալու ձեռքաւորեց ԵԱՀԿ-ի երեսնեան գրասենեակի ներկայացուցիչը: Ոստիկանատան մէջ մէկ քանի ժամ ներկայացուցիչը պահելէ ետք, աւելի ուշ զինք ազատ կ'արձակեն:

ԵԱՀԿ-ի երեսնեան գրասենեակը յայտարարութեամբ մը, իր խորին մտահոգութիւնները արտայայտեց Հայաստանի իշխանութիւններուն՝ այս դատապարտելի միջադէպին համար եւ պահանջեց պարզաբանում:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ...

Հայաստանի մէջ հեղինակներ ընկերութեան նախագահ՝ Միքայէլ Դանիէլեան, գնահատելով Մարտ 1-ի ողբերգական իրադարձութիւնները, դիտել տուաւ, թէ բռնութիւնները կը շարունակուին նաեւ այսօր: Ան ցաւ յայտնեց, որ իշխանութիւնները յետագային եւս պիտի շարունակեն բռնութիւնները, իրենց ազատ կարծիքը արտայայտել փափաքող մարդոց դէմ:

ՀԱՅԱԳՈՒԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ Կ'ԱԻՆԵՆԱՅ

Երէկ, աւելի քան տասը ձեռքաւորուած անձնատուրութիւններ յայտարարեցին հացադուլ: Հացադուլ յայտարարողներու շարքին են Ալեքսանտր Արզումանեանը, Միսանիկ Մալխասեանը, Սմբատ Այվազեանը, Մուշեղ Մաղաթեանը, Կարապետ Ռոբինեանը եւ ուրիշներ: Անոնք բողոքն ալ կը պրնդեն, թէ ձեռքաւորուած են քաղաքական պատճառներով եւ կը պահանջեն անմիջապէս ազատ արձակել բոլոր բանտարկեալները:

Հանրապետական կուսակցութեան քաղաքական դիւանի անդամ Սուրեն Սուրենեանը կը շարունակէ Մարտ 24-էն ի վեր յայտարարած հացադուլը:

Սուրենեանի առողջական վիճակը կը մնայ բաւական մտահոգիչ: Սուրենեանը կը պահանջէ բանտարկեալները ազատ արձակել, հետապնդումները եւ բռնութիւնները դադարեցնել: Փետրուար 25-ին ձեռքաւորուած Սուրենեանը կ'ամբաստանուի հաւաքական անկարգութիւններ կազմակերպելու յանցանքով:

Սուրենեանը կը մերժէ հացադուլէն հրաժարելու իր բարեկամներուն կոչերը: Հայաստանի բանտարկեալներու վարչութեան լրատուական ծառայութիւնը հաղորդեց, թէ հացադուլ կատարող բանտարկեալներուն թիւը հասաւ 101-ի: Անոնցմէ՝ 63 մարդ յայտարարած է անձամկէտ հացադուլ:

Այս կացութեան մէջ, Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիգրան Թորոսեան ըսաւ, թէ այնքան ալ անհնար կամ բացառուած չէ, Մարտ 1-ի իրադարձութիւնները ըմբարկելու համար յանձնաժողովի մը ստեղծումը: Երոխորհրդարանի նախարարներու ներկայացուցիչները կը ճնշեն անկախ հետաքննութիւն մը բանալու ուղղութեամբ:

Վ. ՕՍԿԱՆԵԱՆ. «ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ ԼՈՒՅՈՒՄԸ ՄԻԱՅՆ ԽԱՂԱՂ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋՈՑԱՒ»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան յայտարարեց, թէ Լեռնային Դարաքաղի հակամարտութեան լուծումը խաղաղ բանակցութիւններէն բացի չունի այլընտրանք:

Օսկանեան ըսաւ. «Դարաքաղի խնդիրը բանակցային կարգադրումէն բացի չունի այլընտրանք: Իսկ կարգադրման հիմքը չի կրնար այլ բան ըլլալ քան՝ Լեռնային Դարաքաղի ժողովուրդին ամբողջական իրաւունքի դրսեւորումը»: Օսկանեան ըսաւ, թէ Ատրպէյճան ատելութիւն կը սերմանէ, որպէսզի հակամարտութիւնը պատերազմի ճանապարհով լուծէ: Ան ըսաւ, որ Ատրպէյճան՝ Հայաստանը ամբաստանող այս մոլորակի վերջին երկիրն է, եւ լաւ կ'ընէր եթէ գրադէր իր ներքին գործերով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԸՆՇՈՒՄ ԿԸ ԲԱՆԵՑՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

Հայաստան այցելող Եւրոպայի խորհուրդի նախարարներու պատուիրակութիւնը, Հայաստանի իշխանութիւններուն եւ ընդդիմութեան ներկայացուցիչներուն հետ իր ունեցած հանդիպումներէն ետք, երկիրին իրավիճակը ժողովրդադարակաւ ուղի վերադարձնելու նպատակով ներկայացուց վեց կէտեր: Բաղկացած առաջարկութիւններ:

ՍՈՒԱՆԱ ԿԸ ՄԵՐԺԵ ԲԱՆԱԿՑԻԼ ԳԸՉՊԱՆԿԱՅԻ ՀԵՏ

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան գլխաւոր բանագնաց Խաւիէ Սուլանա մերժեց բանակցութիւններ վարել Յրզպալլայի հետ, նախքան Եւրոմիութեան կողմէ յղուած որոշումի մը անկայութիւնը:

Սուլանա ըսաւ, թէ Եւրոմիութեան որոշումը առ այսօր յստակ է: Ան կը մերժէ միջազգային ահաբեկչութեան ցուցակին մէջ արձանագրուած կազմակերպութիւններուն հետ բանակցութիւն վարել:

Եւրոպական խորհուրդի նախարարներու պատուիրակութիւնը պահանջեց ազատ արձակել բոլոր ձեռքաւորուածները, Մարտ 1-ի դէպքերուն համար կատարել անկախ եւ անկողմնակալ ժողովուրդին վստահութիւնը վայելող հետաքննութիւն: Պատուիրակութիւնը պահանջեց վերանայիլ հանրահաւաքներու դէմ Հայաստանի իշխանութիւններուն դրած արգելքները: Պատուիրակութիւնը դիտել տուաւ, որ Հայաստանի խորհրդարանին վերջերս, հանրահաւաքներու դէմ վաւերացուած օրէնքը մարդու իրաւունքներու խախտում մըն է եւ մաղթեց, որ Հայաստանի կառավարութիւնը լրջօրէն կ'անդադարեցնայ այս դիտողութիւններուն:

Պատուիրակութիւնը իշխանութիւնները եւ ընդդիմութիւնը հրաւիրեց երկխօսութեան, մաղթելով, որ իշխանութիւնները դրական կ'արձագանգեն Եւրոխորհուրդի նախարարներուն նկատողութիւններուն:

ՔՍԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ԵՒՐՈՍԻՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի քաղաքական բեմին վրայ գործող քսան կուսակցութիւններ, երէկ հրապարակեցին «Յարգելու ենք» խորագիրի տակ հաղորդագրութիւն մը, ուր կը դատապարտեն Հայաստանի իշխանութիւններուն բռնութիւնները, մարդու իրաւունքներու ոտնակոխումը, ազատութիւններու նկատմամբ ոտնձգութիւնները: Անոնք դիտել կու տան, որ հակառակ միջազգային ընտանիքին ճնշումներուն, բռնութիւնները, ձեռքաւորութիւնները, կամայականօրէն աշխատանքէ հեռացումները, հանրահաւաքներու դէմ արգելքները աւելի մեծ թափով կը շարունակուին:

Հայաստանի մէջ ժողովրդավարութեան եւ ազատութիւններու համար պայքարող քսան կուսակցութիւնները, իրենց հաւատարմութիւնը կ'արտայայտեն Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակի կարգադրման ծրագիրին՝ հիմնուած Եւրոմիութեան նախագահութեան Մարտ 4-ի յայտարարութեան մէջ նշուած պայմաններուն վրայ, որ կ'առաջադրէ ազատ արձակել բոլոր բանտարկեալները, ստեղծել լրատուութեան հաւասար պայմաններ, Մարտ 1-ի դէպքերուն համար կատարել միջազգային անկախ հետաքննութիւն եւ միայն այս բողոքն է ետք երկխօսութեան սկսիլ իշխանութեան հետ:

ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսիոյ տիեզերական գործակալութեան ղեկավար Անաթոլի Պերմինով Հայաստանի մէջ սերտեց գոյգ պետութիւններուն միջեւ տիեզերական բնագաւառին մէջ համագործակցութեան հնարաւորութիւնները:

Կողմերը համաձայնեցան յառաջիկայ Մայիսին կնքել տիեզերական համագործակցութեան համաձայնագիր մը:

ԼՎՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱՐՔԱՐՈՍՈՒԹԵԱՆ ՉՈՂ

Ուրբանիայէն քաղուած լրատուութեան մը համաձայն, քարքարոսները վնասած են Լվովի հայկական եկեղեցիին ճակատը եւ քանդած են խաչը:

Լվովի հայ համայնքը իշխանութիւններուն բազմիցս դիմած է, լրացուցիչ հսկողութիւն սահմանելու Լվովի այն բաղնիքին մէջ, ուր կը գտնուի հայկական եկեղեցին:

Լվովի քաղաքապետութիւնը եկեղեցին վերանորոգելու պատրաստակամութիւն յայտնեց, այն պայմանաւ որ համայնքը հոգայ շինարարութեան ծախսերը:

ՎԱԻԲԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԿԵՆ՝ ՆՈՒՐՈՒԹԵԱՆ ՍԱՐԿԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ

Հայագի բեմադրիչ Տիգրան Խզմալեան սկսած է նկարահանել Մարդաբապատի հերոսամարտին նուիրուած վերագրական ժապաւէն մը:

Ան յայտարարեց, թէ ժապաւէնը պատրաստ պիտի ըլլայ Մայիսի վերջաւորութեան: Խզմալեան, իր ժապաւէնին համար կ'օգտագործէ հայկական եւ արտասահմանեան արխիւներ: «Հետաքրքրական միւսեր գտած են, որոնք իրապէս դարաշրջանը նկարագրող վաւերագրեր են: Այդ բողոք պիտի փորձեն օգտագործել ժապաւէնին մէջ», ըսաւ Խզմալեան:

ՖԻԼԱՍԵԼՖԻՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՕՊԱՄԱՅԻ ԿՈՂՔԻՆ

Ֆիլատելիա նահանգի հայերը Ապրիլ 19-ին կազմակերպած են Հայկական Յեղասպանութեան յիշատակին նուիրուած մարաթոն մը: Այս միջոցառումին նպատակն է համախմբել Ֆիլատելիոյ հայերը եւ իշխանութիւններուն՝ Հայկական Յեղասպանութիւնը ճանջնալու կոչ ուղղել: Միւս կողմէ, Ֆիլատելիան նահանգի հայութիւնը կը պաշտպանէ ղեմնկրատ թեկնածու Պարաք Օպամայի թեկնածութիւնը: Նախագահի ընտրութեան նախնական ընտրութիւնը Ֆիլատելիայի մէջ պիտի կայանայ Ապրիլ 22-ին: